ՍԴ1/0129/01/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14 օգոստոսի 2025 թվական ք.Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ՍԴ1/0129/01/23 քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2025 թվականի օգոստոսի 4-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2023 թվականի հոկտեմբերի 23-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Վահրամ Ֆրունզեի Գրիգորյանի, Արման Վահագի Մովսիսյանի, Մամիկոն Էդուարդի Փայտյանի և

Արարատ Սերժիկի Թաթուլյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 365-րդ հոդվածի 3-րդ մասով թիվ 90158023 (ՍԴ1/0129/01/23) քրեական վարույթը:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Գ.Աբելյան) 2023 թվականի հոկտեմբերի 26-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ1/0129/01/23 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի օգոստոսի 14-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ1/0129/01/23 քրեական վարույթով հիմնական դատալսումներ նշանակելու մասին:

2. 2025 թվականի փետրվարի 17-ին թիվ ՍԴ1/0129/01/23 քրեական վարույթը վերաբաշխվել է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա.Ոսկանյանին:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի փետրվարի 20-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ1/0129/01/23 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի հուլիսի 17-ին որոշում է կայացրել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր Գ.Պողոսյան) 2025 թվականի օգոստոսի 4-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ1/0129/01/23 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի օգոստոսի 11-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Վահրամ Գրիգորյանին, Արման Մովսիսյանին, Մամիկոն Փայտյանին և Արարատ Թաթուլյանին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով՝ այն բանի համար, որ նրանք խախտել են մարտական հերթապահության կանոնները և դրա հետևանքով ծանր հետևանքներ առաջացրել[1]:

6. Սյունիքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի հուլիսի 17-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) 2025 թվականի հուլիսի 17-ին, նախնական դատաքննությունների ընթացքում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածով նախատեսված հարցի՝ հետաքննման ենթակա ապացույցների ծավալի ժամանակ հանրային մեղադրող Գ.Ավետիսյանը միջնորդեց ապացույցների ծավալի մեջ ներառել դատակոչով նշված ցանկում առկա վկաներից 31 (երեսունմեկ) վկաներ՝ Արտակ Մաթևոսի Դավթյանին, Կամո Գրիգորի Քոչունցին, Գարիկ Էդիկի Օհանյանին, Արթուր Սուրիկի Թադևոսյանին, Մասիս Միհթարի Թովմասյանին, Դերենիկ Սուրենի Առաքելյանին, Համլետ Աշոտի Միրզախանյանին, Տարոն Աշոտի Մանուկյանին, Հովհաննես Գևորգի Կիրակոսյանին, Ալբերտ Արգամի Բաղդադյանին, Կարապետ Հովհաննեսի Քյուփելյանին, Գեղամ Հունանի Մարտիրոսյանին, Սմբատ Սարգսի Ավետյանին, Գրիգոր Գևորգի Իրիցյանին, Դավիթ Անդրանիկի Հարությունյանին, Տարոն Վահագնի Քոչարյանին, Դավիթ Լյովայի Ջորաբյանին, Արցախ Սասունի Հակոբյանին, Հովհաննես Գևորգի Եղիազարյանին, Մհեր Վարուժանի Իսրայելյանին, Դավիթ Վաղինակի Թորոսյանին, Հայկ Սամվելի Սահակյանին, Վահե Մկրտչի Անանյանին, Զավեն Նազարեթի Նիկոլյանին, Գուրգեն Հրաչի Հովհաննիսյանին, Արամ Հրանտի Գրիգորյանին, Էդիկ Ավետիքի Հարությունյանին, Սեյրան Վլադիկի Բաղդասարյանին, Արսեն Վաչագանի Դարբինյանին, Վարդան Արմենի Հովհաննիսյանին և Հովհաննես Ենգիբարի Գրիգորյանին:*

Դատակոչի ենթակա վկաներին ապացույցների ծավալի մեջ չներառելու վերաբերյալ հանրային մեղադրող Գ.Ավետիսյանը հայտնեց, որ այն պայմանավորված է վերջիններիս կողմից նախաքննության ընթացքում տրված

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 11, թերթեր 167-180:

նույնաբովանդակ ցուցմունքներով, և որ նրանց ցուցմունքները չներառելը որևէ կերպ չի կարող ազդել սույն քրեական գործի արդարացիության վրա:

Պաշտպանության կողմը միջնորդեց ապացույցների ծավալում ներառել սույն քրեական գործով նախաքննության ընթացքում հարցաքննված վկաներ՝ Էրիկ Հարությունի Հարությունյանին (…), Էրիկ Գագիկի Մանուկյանին (…), Ալիկ Արսենի Ավագյանին (…), Արամ Սոսի Խաչատրյանին (…), Գրիգոր Ռուստամի Հովհաննիսյանին (…), Նարեկ Հայկի Մնացականյանին (…) և Արայիկ Գենադիի Եպիսկոպոսյանին (…), պատժառաբանելով, որ նշված վկաների ցուցմունքները հաստատում են իրենց պաշտպանյալների անմեղությունը: Նշված վկաները ականատես են եղել դեպքի հանգամանքներին: Բացի այդ նշեցին նաև, որ այդ վկաների հարցաքննությունից ի օգուտ իրենց կարող են ստանալ տեղեկություններ, որոնցից նրանք զրկված են եղել նախաքննության ընթացքում, քանի որ չեն մասնակցել նախաքննության ընթացքում վերոնշյալ վկաների հարցաքննություններին:

(…)

Թիվ ՍԴ1/0129/01/23 քրեական վարույթում առկա տեղեկատվության և մեղադրական եզրակացությանը կից ներկայացված անձանց կարգավիճակի և վերաբերելի անձնական տվյալների համաձայն՝ քրեական վարույթին ներգրավված են՝ մեղադրյալներ Վահրամ Ֆրունզեի Գրիգորյանը (ք.Երևան), Արման Վահագի Մովսիսյանը (ք.Ջերմուկ), Մամիկոն Էդուարդի Փայտյանը (Կոտայքի մարզ), Արարատ Սերժիկի Թաթուլյանը (ք.Վանաձոր) և 38 (երեսունութ) վկաներ, բացի այդ, մեղադրյալներն ունեն պաշտպաններ (հինգ պաշտպան), ովքեր բնակվում են Երևան քաղաքում, այսինքն՝ վարույթին ներգրավված են ընդհանուր 47 (քառասունյոթ) անձինք, որոնցից 18 (տասնութ) վկաները՝ Արտակ Մաթևոսի Դավթյանը, Կամո Գրիգորի Քոչունցը, Դերենիկ Սուրենի Առաքելյանը, Համլետ Աշոտի Միրզաիանյանը, Տարոն Աշոտի Մանուկյանը, Հովհաննես Գևորգի Կիրակոսյանը, Ալբերտ Արգամի Բաղդադյանը, Էրիկ Հարությունի Հարությունյանը, Էրիկ Գագիկի Մանուկյանը, Ալիկ Արսենի Ավագյանը, Արամ Սոսի Խաչատրյանը, Գրիգոր Ռուստամի Հովհաննիսյանը, Նարեկ Հայկի Մնացականյանը, Արայիկ Գենադիի Եպիսկոպոսյանը և Գարիկ Էդիկի Օհանյանը, Արթուր Սուրիկի Թադևոսյանը, Մասիս

Միհիթարի Թովմասյանը, Կարապետ Հովհաննեսի Քյուփելյանը (հիմք՝ գործում առկա տեղեկանքները՝ որոնք նախնական դատաքննումների ժամանակ ներկայացվել են մեղադրանքի և պաշտպանության կողմից), բնակվում են Երևան քաղաքում, մյուս 20 (քսան) վկաներից 4-ը՝ Գեղամ Հունանի Մարտիրոսյանը, Սմբատ Սարգսի Ավետյանը, Տարոն Վահագնի Քոչարյանը և Արցախ Սասունի Հակոբյանը բնակվում են Գեղարքունիքի մարզում, 1-ը՝ Արամ Հրանտի Գրիգորյանը, Արագածոտնի մարզում, 5-ը՝ Դավիթ Վաղինակի Թորոսյանը, Հայկ Սամվելի Սահակյանը, Զավեն Նազարեթի Նիկոլյանը, Գուրգեն Հրաչի Հովհաննիսյանը, Արսեն Վաչագանի Դարբինյանը՝ Շիրակի մարզում, 4-ը՝ Դավիթ Անդրանիկի Հարությունյանը, Սեյրան Վլադիկի Բաղդասարյանը, Վարդան Արմենի Հովհաննիսյանը և Հովհաննես Ենգիբարի Գրիգորյանը՝ Կոտայքի մարզում, 4-ը՝ Դավիթ Լյովայի Զորաբյանը, Հովհաննես Գևորգի Եղիազարյանը, Միհեր Վարուժանի Իսրայելյանը, Վահե Մկրտչի Անանյանը՝ Լոռու մարզում, 2-ը՝ Էդիկ Ավետիքի Հարությունյանը և Գրիգոր Գևորգի Իրիցյանը՝ Սյունիքի մարզում:

Դատարանն արձանագրում է նաև, որ մեղադրյալ Վահրամ Ֆրունզեի Գրիգորյանը նույնպես բնակվում է Երևան քաղաքում:

Ամփոփելով վերոգրյալը Դատարանն արձանագրում է, որ քրեական գործով վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը՝ 47-ից 24-ը բնակվում են Երևան քաղաքում, որի դատական տարածք է հանդիսանում ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը:

Թեև վերոգրյալը, ինչպես նաև քրեական գործում առկա այլ հանգամանքները բավարար են քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու մասին համապատասխան որոշում կայացնելու համար, այդուհանդերձ Դատարանն արձանագրում է, որ սույն քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը բխում է արդարադատության շահից նաև հետևյալ պատճառաբանությամբ.

Դատարանն ապացույցների ծավալը որոշելուց հետո պարզել է, որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնության՝ 47-ից 24-ը բնակվում են Երևան քաղաքում, իսկ 23-ը՝ Երևան քաղաքին հարակից և մոտ մարզերում:

Վերոնշյալ վկաների և մեղադրյալների բնակության վայրը Երևան քաղաքին հարակից և մոտ մարզերում բնակվելու հանգամանքը, ինչպես նաև պաշտպանների՝ Երևանում բնակվելու հանգամանքը Դատարանի համոզմամբ ունի էական նշանակություն արդարադատության շահը գնահատելու համար նաև ՀՀ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով ամրագրված՝ անձի՝ ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքի ապահովման տեսանկյունից:

Բացի վերոգրյալից, Դատարանը հաշվի է առնում նաև վարույթով ներգրավված վկաների մասնակցությունն դատական նիստերին ապահովվելու նպատակով քրեադատավարական գործիքակազմի իրականացման արդյունավետության գնահատումը:

Ամփոփելով վերոգրյալը և նկատի ունենալով, որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում են Երևան քաղաքում, իսկ մնացած մասնակիցները Երևան քաղաքի հարակից և մոտ մարզերում, ինչպես նաև մեղադրյալները համաձայնվել են, որ վարույթն ըստ ընդդատության փոխանցվի ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան, Դատարանը գտնում է, որ սույն քրեական վարույթի տարածքային ընդդատությունն անհրաժեշտ է փոխել և այն ուղարկել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան, քանի որ առկա են օրենքով նախատեսված հիմքերը և այն բխում է արդարադատության շահից (…)»[2]:

7. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի օգոստոսի 4-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Դատարանը հարկ է համարում արձանագրել, որ թիվ ՍԴ1/0129/01/23 քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխվել և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցվել չէր կարող, քանի որ (…) վկա Կարապետ Հովհաննեսի Քյուփելյանը փաստացի բնակվում է Երևան քաղաքից դուրս, իսկ ինչպես բխում է սույն որոշման 2-րդ կետում առկա ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2025*

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 16, թերթեր 188-190:

թվականի հուլիսի 17-ի «Քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու մասին» որոշումից ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն արձանագրել է, որ քրեական գործով վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը՝ 47-ից 24-ը բնակվում են Երևան քաղաքում, հաշվի չառնելով, որ վերը նշված վկան, ոչ թե բնակվում է Երևան քաղաքում, այլ միայն հաշվառված է Երևան քաղաքում, այսինքն՝ քրեական գործով վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների, ոչ թե մեծամասնությունը՝ 47-ից 24-ը, այլ փոքրամասնությունը՝ 47-ից 23-ն է բնակվում Երևան քաղաքում:

Այսուհանդերձ Դատարանը հարկ է համարում արձանագրել նաև, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն, իր որոշմամբ արձանագրելով, որ քրեական գործով վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը՝ 47-ից 24-ը բնակվում են Երևան քաղաքում, հաշվի է առել համապատասխան տեղեկանքների առկայության հանգամանքը, ինչը Դատարանի գնահատմամբ իրավաչափ համարվել չի կարող, քանի որ նախնական դատալսումների, ընդ որում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված վարույթի ընդդատության հարցի քննարկումն իրականացնելուց հետո Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը չէր կարող կասկածի տակ դնել մեղադրական եզրակացությանը կից թիվ 90158023 քրեական վարույթին ներգրավված բոլոր անձանց կարգավիճակի և վերաբերելի անձնական տվյալների վերաբերյալ ցուցակում առկա տվյալների հավաստիությունը և մի շարք վկաների փաստացի բնակության վայրի վերաբերյալ ձեռք բերեր և ուսումնասիրեր նոր փաստական տվյալ, դա էլ այն պայմաններում, երբ մի դեպքում Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը կասկածի տակ չի դնում վերը նշված ցուցակում առկա տվյալների իսկությունը և այդ ցուցակում առկա տվյալները հիմք ընդունելով արձանագրում է համապատասխան անձանց Երևան քաղաքում բնակվելու հանգամանքը, իսկ մյուս դեպքում, մասնավորապես՝ այն անձանց մասով, ովքեր վերը նշված ցուցակում առկա տվյալների համաձայն՝ բնակվում են Երևան քաղաքից դուրս, ձեռք է բերում նոր փաստական տվյալ վերջիններիս Երևան քաղաքում բնակվելու վերաբերյալ, այնուհետև այդ հանգամանքի հաշվառմամբ

փոխում է քրեական գործի տարածքային ընդդատությունը, դա էլ այն պայմաններում, երբ սույն քրեական գործը դեռևս 2023 թվականի հոկտեմբերի 23-ից գտնվում է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում և նույնիսկ մեկ այլ դատավորի նախագահությամբ դեռևս 2024 թվականի օգոստոսի 24-ի համապատասխան որոշմամբ նշանակված է եղել հիմնական դատաքննություններ:

Այլ կերպ ասած, եթե Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը կասկածի տակ է դրել մեղադրական եզրակացությանը կից թիվ 90158023 քրեական վարույթին ներգրավված բոլոր անձանց կարգավիճակի և վերաբերելի անձնական տվյալների վերաբերյալ ցուցակում առկա տվյալների հավաստիությունը և որոշ անձանց Երևան քաղաքում բնակվելու վերաբերյալ ձեռք է բերել համապատասխան տեղեկանքներ, ապա ինչու մյուս այն անձանց մասով, ովքեր վերը նշված ցուցակում առկա տվյալների համաձայն՝ բնակվում են Երևան քաղաքում, ձեռք չի բերել բնակության վայրի վերաբերյալ նոր փաստական տվյալներ՝ չբացառելով, որ վերը նշված անձինք հնարավոր է, որ փոխել են իրենց բնակության տարածքը և այլևս Երևան քաղաքում չեն բնակվում, կամ զուտ կասկածի տակ դնելով վերը նշված անձանց բնակության վայրի վերաբերյալ մեղադրական եզրակացությանը կից թիվ 90158023 քրեական վարույթին ներգրավված բոլոր անձանց կարգավիճակի և վերաբերելի անձնական տվյալների վերաբերյալ ցուցակում առկա տվյալների հավաստիությունը:

Ավելին՝ վկաների բնակության վայրի մասին մեղադրական եզրակացությանը կից քրեական վարույթին ներգրավված բոլոր անձանց կարգավիճակի և վերաբերելի անձնական տվյալների վերաբերյալ ցուցակում առկա տվյալներից դուրս նոր տվյալ ձեռք բերելու անթույլատրելիության մասով հարկ է արձանագրել նաև, որ այն դեպքում, երբ սույն քրեական գործը շուրջ 1 տարի 10 ամիս գտնվել է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում չի բացառվում, որ այդ ընթացքում համապատասխան անձինք, նույնիսկ այն անձինք, որոնց բնակության վայր նշված է Երևան քաղաքը, փոխել են, կամ ապագայում կարող են փոխել իրենց բնակության վայրը:

Այլ կերպ ասած կարող է ստացվել մի իրավիճակ, երբ քրեական գործերի տարածքային ընդդատությունը անընդհատ կարող է փոխվել, բացառապես պայմանավորված քրեական գործերի քննության ընթացքում վկաների իրենց բնակության վայրի փոփոխման հանգամանքով, ինչը չի կարող բխել արդարադատության շահից և կարող է հանգեցնել քրեական գործերի շրջապտույտի:

Բացի վերը նշվածը հարկ է արձանագրել նաև, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասում նշված «վարույթի մասնավոր մասնակիցներ և վկաների մեծամասնություն» եզրույթը չպետք է մեկնաբանվի նեղ իմաստով և արձանագրվի, որ քրեական գործով վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը՝ 47-ից 24-ը (թեև սույն որոշմամբ արդեն իսկ արձանագրվել է քրեական գործով վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների, ոչ թե մեծամասնության՝ 47-ից 24-ը, այլ փոքրամասնության՝ 47-ից 23-ը Երևան քաղաքում բնակվելու հանգամանքը), որի մեջ ներառված են նաև մասնավոր հիմունքներով պաշտպանություն իրականացնող թվով 5 փաստաբաններ, բնակվում են Երևան քաղաքում, քանի որ քրեական գործի յուրաքանչյուր փուլում պաշտպանները կարող են փոխարինվել (ինչը տեղի է ունեցել սույն քրեական գործի քննության ընթացքում) և դրա արդյունքում ևս կարող է առաջանալ քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու դատական շրջապտույտ:

Ավելին՝ թեև սույն որոշման 4-րդ կետում արդեն իսկ արձանագրվել է վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնության բացակայության հանգամանքը, այսուհանդերձ հարկ է փաստել նաև, որ սույն քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելը և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելը չի բխում արդարադատության շահից, քանի որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնության ձևավորումը ինչպես բխում է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2025 թվականի հուլիսի 17-ի «Քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու մասին» որոշումից, պայմանավորված է եղել հինգ պաշտպանների մասնակցությամբ:

(…) Ամփոփելով սույն որոշման 4-րդ կետում արձանագրված հանգամանքները՝ ակնհայտ է, որ «Քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու մասին» Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2025 թվականի հուլիսի 17-ի որոշման կայացման պահին Երևան քաղաքը չի հանդիսացել սույն քրեական գործի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնության բնակության վայրը, ինչը նշանակում է, որ Երևան քաղաքը չէր կարող գնահատվել որպես վերը նշված անձանց մեծամասնության բնակության վայր, իսկ թիվ ՍԴ1/0129/01/23 քրեական գործը չէր կարող ըստ տարածքային ընդդատության փոխանցվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան, ուստի Դատարանն իր անհամաձայնությունն է հայտնում թիվ ՍԴ1/0129/01/23 քրեական գործի տարածքային ընդդատությանը և գտնում է, որ վարույթը պետք է ուղարկել ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատ՝ տարածքային ընդդատության հարցը վերջնականապես լուծելու համար: (…)»[3]:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ թիվ ՍԴ1/0129/01/23 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին որոշումը:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի*

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 16, թերթեր 214-217:

առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[5]:

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «*(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախապատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[6]:

12. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Այդ չափանիշների հիմքում ընկած են ոչ թե իրավակիրառների սուբյեկտիվ հայեցողությունը, այլ քրեական վարույթի օրենքով սահմանված օբյեկտիվ հատկանիշները, որոնց առկայությունն էլ թույլ է տալիս արձանագրել տվյալ դատարանի՝ այդպիսին հանդես գալու իրավունքն այդ վարույթով: Միաժամանակ, ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտներից, որոնք կարող են առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «*Տարածքային ընդդատությունը բոլոր մեղադրյալների*

---

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

համաձայնությամբ կարող է փոխվել, եթե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում: Ընդդատությունը փոխելու որոշումն ընդունում է մեղադրանքը քննող դատարանը»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:*

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (…)»:

13.1. Անհրաժեշտ է ընդգծել, որ ընդդատությունը փոխելու վերոնշյալ հայեցողական լիազորությունը կարող է գործադրվել բացառիկ դեպքերում, երբ բավարար փաստական տվյալների վկայակոչմամբ համոզիչ կերպով կհիմնավորվի ընդդատությունը փոխելու օրենսդրի կողմից առաջադրվող պայմանների առկայությունը, ինչպես նաև քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը՝ արդարադատության շահի տեսանկյունից: Հետևաբար, նշված նորմը մեկնաբանելիս չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, այն չպետք է ենթարկվի լայն մեկնաբանության՝ բացառելով վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների բնակության վայրերի զուտ տեխնիկական հաշվառմամբ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու հնարավորությունը:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ սույն վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը (47-ից 24-ը) բնակվում է Երևան քաղաքում, որոշում է կայացրել վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Երևան

քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը նշել է նաև, որ սույն քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը բխում է նաև արդարադատության շահից[7]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, փաստելով, որ սույն վարույթով վկա Կ.Քյուփելյանը չի բնակվում Երևան քաղաքում, գտել է, որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը չի բնակվում Երևան քաղաքում:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը գտել է նաև, որ սույն վարույթի տարածքային ընդդատությունը փոխելը չի բխում նաև արդարադատության շահից, հաշվի առնելով, որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնության ձևավորումը սույն դեպքում պայմանավորված է հինգ պաշտպանների մասնակցությամբ[8]:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը փաստում է, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելիս և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելիս, չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները:

Այսպես, սույն քրեական վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ վարույթին ներգրավված են թվով քառասունյոթ մասնավոր մասնակիցներ և վկաներ, որոնցից միայն քսաներեքն են բնակվում Երևան քաղաքում: Այս առումով Վճռաբեկ դատարանի քրեական պալատն ընդունելի է համարում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի այն փաստարկը, որ սույն վարույթով վկա Կ.Քյուփելյանի հաշվառման հասցեն թեև նշված է Երևան քաղաքը,

---

[7] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[8] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

սակայն համաձայն վարույթի նյութերի՝ վերջինիս բնակության վայրը Արագածոտնի մարզն է[9]: Հետևաբար, չի հաստատվում, որ սույն վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը փաստում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու օրենսդրական հիմքը բացակայում է:

16. Վերոգրյալի հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը կրկնում է, որ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը կարող է փոխվել միայն բացառիկ դեպքերում, **երբ բավարար փաստական տվյալների վկայակոչմամբ համոզիչ կերպով կհիմնավորվի** ընդդատությունը փոխելու համար առաջադրվող պայմանների առկայությունը, ինչպես նաև քրեական **վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը՝ արդարադատության շահի տեսանկյունից**: Սույն վարույթի փաստական հանգամանքների գնահատմամբ, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը հիմնավոր է համարում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի այն դատողությունը, որ **Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, դրսևորելով խիստ ձևական մոտեցում**, վարույթի տարածքային ընդդատությունը փոխել և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան է փոխանցել վերոնշյալ բացառիկ հիմքերի բացակայության պայմաններում:

17. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ թիվ ՍԴ1/0129/01/23 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին որոշումը հիմնավոր չէ:

---

[9] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթ 226:

18. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ սույն քրեական վարույթն ըստ ընդդատության պետք է ուղարկել Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ՍԴ1/0129/01/23 քրեական վարույթն ըստ ընդդատության ուղարկել Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ